**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ $19_2$ 71-5-10

Թիվ 18/ 121
,, 08 ,, հոկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՓՈԽՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն փոխմարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2018թվականի սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեբերի 8-ը ընդունված որոշումները , կարգադրություններ չի արձակվել:

Առդիր ,, 3 ,, թերթից

Համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2018 թվականի N 47

## ՏՆԱՄԵՐՁԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-իներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Սոֆյա Միխայելի Սիմոնյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 04-020-009-012 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 39 փողոցի 1-ին նրբանցք թիվ 1 հողամաս.

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում;

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թվականի հոկտեմբերի 08
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

## Ո Ր Ո Շ Ու Մ

«28» սեպտեմբերի 2018 թվականի N 46 -Ա

## ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 82 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՎԳԻՆԵ, ՓՈՐՍՈՐ, ՍԱՄՎԵԼ. ԶԻՆԱ, ՅՈՒՍՈՒԲ ԽՈՒԴՈՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմավիր գյուղի բնակիչ՝Սևգինե Մրազի Խուդոյանի գ.Արմավիր 1 փողոց թիվ 82 հասցեում գտնվող,գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումը;.

Հաշվի առնելով. որ,հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով. և հաշվի առնելով որ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին

## Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝

1՝Ճանաչել քաղաքացի Սևգինե Մրազի Խուդոյանի /ծնված 18.07.1957թ./, Փորսոր Մուսայի Խուդոյանի /ծնված 30.10.1956/թ , Սամվել Սևգինեյի Խուդոյանի /ծնված 22.12.1977թ./, Զինա Սևգինեյի Խուդոյանի /ծնված 13.11.1980թ./, Յուսուբ Սևգինեյի Խուդոյանի /ծնված 28.01.1982թ./, գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 8 փողոց թիվ 82 հասցեում գտնվող 1200 քառ/մ օրինական հողամասի վրա գտնվող 1960թ-ին կառուցված՝ 91.90 քառ/մ, բնակելի տան, ինչպես նաև՝ 1997թ-ին կառուցված՝ 55.50 քառ/մ, բնակելի տան, 6.10 քառ/մ մառանի, 17.70 քառ/մ ծածկոցի, 45.80 քառ/մ անասնաշենքի, 17.60 քառ/մ թոնրատան նկատմամբ

2.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Սևգինե Մրազի Խուդոյանի և մյուսների սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2018թվականի սեպտեմբերի 28
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» սեպտեմբերի 2018 թվականի N 45 -Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի`ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ` Սևգինե Մրազի Խուդոյանին պատկանող բնակելի տանը /ծածկագիր 04-020-054-016 / տալ հասցե` Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 1 փողոց թիվ 82 .

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում`պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար`** **Ռ.Ֆ.Մարգարյան**

2018 թվականի սեպտեմբերի 28
գ.Արմավիր